№ 140 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3 — 1894 — ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3 № 140

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիւրքաց հայերի մասին. Մամուլը և Թիւրքաց հայերի հարցը. Թարգմանը ինքը դատաւորը պէտք է լինի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օգիւստ Բիւրդո. Գերմանական բլյսստագի բացումը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաղթականներ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հեռագրով)

—

Մեր Թղթակիցը մեզ հեռագրում է Պետերբուրգից, դեկտեմբերի 1-ից, հետևեալը։ „Լօնդօնից „Нов. Время“ լրագրին հեռագրում են. „Լօնդօնի եկեղեցիներում քարոզիչները հրաւիրում էին քրիստոնեայ պետութիւններին պաշտպանել հայերին Թիւրքերի դէմ։

„Վերոյիշեալ լրագիրը իր առաջնորդող յօդուածում երէկ ասում է. „Անգլիային չի աջողվի փրկել գործը. միջազգային հարցը մինչև հայկական գաւառների գրաւումը չի հասնի։ Ռուսաստանի ազդեցութիւնը Թիւրքիայի վրա այնքան զօրեղ է, որ ռուսաց դիպլոմատիայի առաջարկութիւնները և ազէնաներ ուղարկելը կոտորածի տեղը բաւական կը լինի ստիպելու Թիւրքիային իրագործել Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը“։

Նոյեմբերի 30-ից Օդէսայից հեռագրում են մեզ հետևեալը. „Օդէսայի „Одесскія Новости“ լրագրի Լօնդօնի Թղթակիցը հեռագրում է, որ Լօնդօնի մի քանի եկեղեցիներում անգլիական հոգևորականութիւնը քարոզում է, որ քրիստոնեաների պարտքն է օգնել հայերին, որոնք ճնշվում և հարստահարվում են անհաւատների կողմից, և դիմել աղերսագրով կառավարութեանը։

ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԸ

—

Լօնդօնի լրագիրները հաղորդում են հետևեալ տեղեկութիւնը. „Նոյեմբերի 15/27-ին Լօնդօնում կայացաւ անգլօ-հայկական ընկերութեան մի բազմամարդ միտինգ՝ սը Ստէվենսօնի նախագահութեամբ։ Նամակներով և հեռագիրներով հաղորդած բոլոր տեղեկութիւնները կարդալուց յետոյ, որոնց մեծ մասը պահանջում էր, որ Լօնդօնում դեկտեմբեր ամսին կազմվի մի միտինգ—an indignation meeting (զայրոյթ արտայայտող միտինգ) Թիւրքաց Հայաստանում տեղի ունեցող վերջին անցքերի առիթով, ներկայ եղողները հետևեալ վճիռը կայացրին. միջնորդել Թագուհու կառավարութեան առաջ 1) որ հրատարակվին հիւպատոսական հաղորդութիւններ, 2) Յասունի սպանութիւնների գործի առիթով հիւպատոսական քննութիւն նշանակել, և 3) Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը աւելի խիստ կերպով իրագործել։

Կ. Պօլսից „Ռէյտերի“ գործակալութիւնը հեռագրում է. „Միացեալ Նահանգների նախագահ Կլիվլենդ մերժեց ամէրիկական մի պատգամաւոր նշանակել՝ Հայաստան ուղարկվող մասնաժողովին մասնակցելու համար։ Այդ պատճառով Բ. Դուռը առաջարկեց, որ մասնաժողովին ընկերակցի անգլիական մի հիւպատոս“։

Պետերբուրգի „Новое Время“ լրագիրը, խօսելով հայոց հարցը լուծելու մասին, ասում է, որ Ռուսաստանի ազդեցութիւնը այնքան մեծ է Թիւրքիայի վրա, որ ռուսաց դիպլոմատիայի առաջարկութիւնները և Հայաստան գործակալներ ուղարկելը բաւական է արդէն, որ Թիւրքիան ստիպված լինի պահպանել Բերլինի դաշնագրի յօդուածները։

Լօնդօնից հեռագրում են Պետերբուրգի լրագիրներին, որ Լօնդօնի եկեղեցիներում անգլիացի քարոզիչները, նկարագրելով Թիւրքաց հայերի սոսկալի վիճակը, հրաւիրում են քրիստոնեայ կառավարութիւններին օգնութեան ձեռք մեկնել բազմաչարչար քրիստոնեայ ժողովրդին,—հայերին։

Պետերբուրգի „Новости“ լրագիրը հայոց հարցին նուիրված մի յօդուածում ասում է, որ Ռուսաստանը չէ կարող անտարբեր մնալ, քանի որ նա միշտ հոգս է տարել Թիւրքիայում ապրող քրիստոնեաների վրա, և մարդասիրութեան զգացմունքը պահանջում է, որ Ռուսաստանը պաշտպանէ Թիւրքաց հայերին մահմետական ֆանատիկոսութեան դէմ։

Լօնդօնից „Ռէյտերի“ գործակալութիւնը հեռագրում է. „Ուէթսունի կլուբ“ կոչված հիմնարկութեան մէջ Կիմբերլէյը, նոյեմբերի 24-ին, մի ճառ արտասանեց, որի մէջ ասաց, թէ կառավարութիւնը լաւ է զգում այն սարսափը, որ տիրում է Հայաստանում, և լրջօրէն մտածում է գործը անկողմնապահ կերպով քննելու մասին“։ Կիմբերլէյ իր ճառը վերջացրեց այս խօսքերով. „Կառավարութիւնը չի դաւաճանի և իր պարտքը կը կատարի“։

Թիֆլիսի „Кавказъ“ լրագիրը, իր դեկտեմբերի 1-ի համարում տպագրել է մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

I

Բասէնի դաշտը կտրելուց յետոյ, դէպի ռուսաց հողը տանող տարածութիւնը հանդչում է նախ մի երկար կիրճի, որ արևելքից արևմուտք է պարզված, և յետոյ էլ սկիզբ է տալիս Քէօսէ-դաղ կոչվող ամէհի լեռնաշղթային։

Այդ, գրեթէ վայրենի լեռնաշղթան, իր հովիտների և մացառուտ անտառների մէջ պատսպարում է միմիայն վայրենի կենդանիներ և մարդկային վայրենի ցեղեր։ Ամառը վերևում, իսկ ձմեռը ներքևում այդ ցեղերը աւելի ևս անմատչելի են դարձնում լեռնաշղթան։

Այնտեղից է, որ յաճախ անցնում են մաքսանենդները և փախստականները. այնտեղից է, որ քիւրդերի վայրենի ցեղերը խմբված, կտրում են կիրճը, ասպատակում դաշտերը, աւերում շրջակայքը և գնում լեռների ծործորներում անպատիժ վայելելու իրանց աւարները։

Անցորդը լեռնաշղթայի մէջ ժամերով ոչ մի շնչաւոր էակի չէ հանդիպում. ապառաժ, ձիւն, մացառներ, սոսկալի անդունդներ, երբեմն սքանչելի վայրենութեամբ զարդարված խորշեր, որոնք խոր, սոսկացնող լռութիւն են պահում, և մի-մի անգամ իրանց խորքերից վեր են արտադրում մի գետակի կարկաչ, մի վայրենի թռչունի կծու աղաղակ և կամ մի գայլի ոռնոց։

Այդպէս է Քէօսէ-դաղին։ Աւելի սոսկալի է նա ձմեռվայ ամիսներում, երբ ձիւնն էլ մի սպիտակ սաւանով զարդարում է այդ բոլոր վայրենութիւնը։ Ով մի անգամ իր կեանքի մէջ փորձել է անցնել այն կողմերից, նա անշուշտ մոռացած չի լինի այդ ահաւոր լեռնաշղթան։

Այդ լեռնաշղթայի մէջն էր, Քէօսէ-դաղի գլխաւոր գագաթից ոչ շատ հեռու, որ մի ցուրտ և մութ գիշեր, բլուրն ի վեր էր մագլցում մի ճանապարհորդ։

Մենակ, հրացանը գաւազանի տեղ գործածելով, նա ծանր քայլերով բարձրանում էր։ Ձիւնի սառած շերտը խշրտալով փշրվում էր նրա ոտքերի տակ։

Ցոդնած էր, շատ էր քայլել. շունչը կտրվում էր։ Բլուրի գագաթը երևում էր ձիւնի սպիտակութեան շնորհիւ։ Ճիգ գործեց, փոխեց քայլերը և հասաւ կատարին։

Այնտեղ, իջնող զառիվայրի գլխին կանգ առաւ նա, հրացանի կոթը գետնին դրեց, կռթնեց նրա փողի վրա և սկսեց դիտել։

Գրեթէ ոչինչ չէր երևում։ Մի անհուն սևութիւն կար նրա առջև, որ տեղ տեղ, խորքում, ծակծկված էր մի քանի փայլուն բծերով։

Սահմանագլխի և ըլրի ստորոտում գտնվող գիւղերի կրակներն էին. անշուշտ քիւրդերի գիւղեր։

Սև ամպերից կազմված միապաղաղ մի ծածկոց էլ թագցրել էր երկնքի երեսը. աստղի նշոյլ չը կար։ Բնութեան խուլ շշուկը, խառնված հեռուից հասնող ագռաւների ձայների հետ, ծփում էր անդունդների վրա և անհետանում անսահման տարածութեան մէջ։

Ճանապարհորդը լարեց ուշադրութիւնը և նրան այնպէս թվաց, որ լսում է շների ձայն, բայց այնքան խուլ և անորոշ, որ նրանց որ կողմից գալը որոշել՝ անհնար էր։

Գտնվում էր սահմանագլխի մօտ։ Այդ նա չը գիտէր։ Բասէնում նրան այնպէս էին ասել, որ եթէ կրակներ տեսնէ, ապահով թող լինի, որ սահմանագլխի մօտն է։

Ուրեմն, այդ սևութեան խորքումն էր ահա, որ գտնվում էր այն երկրի սիլուէտը, որի մասին իրանց մօտ այնպէս ցանկալի երազներ էին տեսնում, ուր—ասում էին—ոչ քիւրդն է յափշտակում անպատիժ, և ոչ էլ կոպիտ ոյժը բարբարոսաբար յաջողվում է ձեռնամուխ լինել մարդուս ամենանուիրական սեփականութեանը..

Ուրեմն մի փոքր ևս և նա ոտքը պէտք է դնէր այդ հողի վրա։

Բայց նա չէր եկել մտնելու այդ երկիրը։ Նրա համար այդ միտքը չատ էլ գրաւիչ չէր եղել։

Նրա մտադրութիւնը այն չէր, որ խուսափէր իր դառնութիւններով լի երկրից և գնալ այնտեղ, ուր—ասում էին—կան գթոտ, բարի մարդիկ։

Բարի մարդկանց պէտք չունէր նա և ոչ էլ օգնութեան։ Թշնամին նրա մէջքը դեռ տեսած չունէր, նրա հրացանի գնտակը պարապ անցել՝ օդը չէր պատառել և ոչ էլ դաշոյնը իզուր օդի մէջ խաղացել։

Մուշի լեռների կորիճ զաւակն էր նա.—դաշտի Գոմեր գիւղացի Պետրոսը, որին ոչ մէկը արատաւորել չէ կարողացել և ոչ մի քիւրդ ծուռ աչքով չէ նայել։

Նա թողել էր Մուշի դաշտը ոչ թէ այն պատճառով, որ կը կամենար ինքն էլ միւս թուլամորթների պէս խուսափել չարիքներից, ոչ թէ որովհետև քիւրդերը ուտելու ոչ մի կտոր հաց չէին թողնում և կամ վայրենի զօրքերը ամեն բան պղծում, ապականում էին... Ոչ. Նա թողել էր երկիրը, քայլել էր անդադար, երկար ու տաժանելի ճանապարհներ էր կտրել, որովհետև փնտռում էր իր Նազենիկին, իր նշանածին, իր միակ սիրելիին, իր ոգեորիչ հրեշտակին...

Ո՞վ գիտէ որտեղ էր նա այժմ իր ծնողների և համագիւղացիների հետ, երկրի որ լեռների մէջ ապաստանած կամ նոյն իսկ, ով գիտէ, որ ճանապարհի վրա սպանված, ընկած։

Դրանից քսան օր առաջ Բուլանըխից Մուշ վերադառնալով՝ աչքի առջև ունէր, որ Գոմեր կը հասնի և տարիներով փայփայած երազը կիրագործի, որ իր Նազենիկին կունենայ։ Խոստացել էին պսակը այդ ձմեռ կատարել։

Նա սիրում էր իր Նազենիկին. աղջիկն էլ նրան էր պաշտում։

Նրանք միանգամայն երջանիկ էին։ Պետրոսը ոչ մի մռայլ բան չէր տեսնում Բուլանըխից վերադառնալիս։ Քրդերի բարբարոսութիւնները սովորական բաներ էին։ Ասում էին, որ Մուշի դաշտում քիւրդերը, աշիրաթները գիւղերը աւերում են և օր չէ լինում, որ մի քանի տասնեակ մարդկանց չը կոտորեն, բայց Պետրոսը այդ լաւ նոր չէր տեսնում։

Եւ այդպէս, միշտ վարգագոյն յոյսերով՝ նա Բուլանըխից Մուշ եկաւ, սրտատրոփ Գոմեր վազեց իր նշանածին տեսնելու, իր բարեկամներին համբուրելու։

Բայց երբ հասաւ գիւղ, ինչ տեսնէ...

—

Սասունի բաքրանցի քիւրդերի ցեղապետը,—ահա թէ ինչ պատժեցին նրան,—ուզել էր տանել Նազենիկին, հաւանել էր նրան. Վրթնօն, աղջկայ հայրը, այդ լսելով, մի գիշեր առել էր իր ընտանիքը, շալակել էր ինչ որ կարողացել էր և գնացել էր խառնվելու գաղթականների խմբերի հետ։

Սպանվել էին և տանջանքի ենթարկվել Նազենիկի և նոյն իսկ Պետոի ազգականներից, որովհետև Իւսուֆ-աղան գիտէր Նազենիկի նշանված լինելը. կարծել էր թէ աղջկան իր նշանածն է վախցրել և այդպէս իր վրէժն էր առել գիւղից։

Գոմերը աւերվել էր։

Այդ բոլորը կարծէք բաւական չէր դեռ. Իւսուֆ-աղային միանալու էին եկել ուրիշ ցեղեր էլ և մի ընդհանուր աւերածութեան էին ենթարկվել Մուշի դաշտի գիւղերը։

թղթակցութիւն Տրապիզոնից՝ Սասունի դէպքերի մասին։ Պաշտօնական ռուս լրագրի թղթակիցը միանգամայն հաստատում է այն բոլորը, ինչ որ մինչև այժմ հաղորդված է Սասունի սոսկալի կոտորածի և աւերմունքների մասին։

Եւրոպական շատ լրագիրներ բողոքում են այն բանի դէմ, որ Հայաստանի դէպքերը քննելու համար ուղարկված է ոչ թէ եւրոպական քննիչ յանձնաժողով, այլ Թիւրքաց յանձնաժողով։ Արդարութիւնը պահանջում է, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների ներկայացուցիչները գնան Հայաստան, իրերի դրութիւնը քննելու համար, և ոչ թէ Թիւրք կառավարութեան պաշտօնեաները, որոնց չէ կարելի հաւատ ընծայել։—Դա է շատ լրագիրների ընդհանուր կարծիքը։

Մենք կատարելապէս համաձայն ենք „Новое Обозрѣніе“ լրագրի երէկվայ համարում յայտնած կարծիքի հետ։ Ճշմարիտ, միայն եւրոպական պետութիւնների կողմից կատարված անկողմնապահ քննութիւնը կարող է ցոյց տալ այն ճանապարհը, որով կարելի կը լինի թոյլ չը տալ, որ կրկնվեն այն տեսակ վերին աստիճանի ծանր դէպքեր, ինչպէս Սասունի դէպքերն են։ Եվրէ կաբինետները այժմ տատանվում են մի վճռական միջոցի դիմել հայոց հարցի մասին, ինչպէս ասված է Պարիզի հեռագրի մէջ, այդ նրանից է, որ եւրոպական բոլոր պետութիւնները մի անգամ իրանց սեփական ներկայացուցիչներին չուղարկեցին Հայաստան, որպէս զի վերջնական գաղափար կազմեն այդ երկրի վիճակի մասին, և դրա վրա հիմնվելով՝ մի վճռական քայլ անեն։

Լրագիրը աւելացնում է. „Իսկ խօսել այն մասին, թէ պէտք է հերթական հարցերի շարքից հանել հայոց հարցը,—ինչպէս այդ կամենում է ինքը Թիւրքիան,—դրա համար ոչինչ հիմքեր չը կան“։

ԹԱՐԳՄԱՆԸ ԻՆՔԸ ԴԱՏԱՒՈՐԸ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ

—

„Մշակի“ 104-րդ համարում խօսելով թարգմանների միջոցով կատարվող դատավարութեան մասին, մենք վերջացրինք մեր յօդուածը հետևեալ խօսքերով. „Ահա մի դասակարգ, որ էական կերպով վնասում է արդարադատութեան գործին, առաջ է բերում նոյն իսկ օրէնքի և արդարադատութեան նպատակներին հակառակ արդիւնք և խանգարում է կանոնաւոր, արդար դատավարութիւնը, սերմանելով ժողովրդի մէջ անվստահութիւն դէպի դատարանը։“

Ինչպէս անել ուրեմն, որ արդարադատութեան ճանապարհի վրա կանգնած այդ խոչընդոտը վերացվի։ Դուցէ մեզ կը պատասխանեն, թէ պէտք է ունենալ հմուտ, բարեխիղճ և կրթական ցէնզ ունեցող թարգմաններ։

Բայց այդ ցանկութիւնը գործնական կեանքի մէջ հանդիսանում է պլատոնական։ Հմուտ, կրթված թարգման ունենալու համար պէտք է տալ և լաւ վարձատրութիւն. էլ չենք խօսում այն մասին, որ շատ տեղում թարգմանները նոյն իսկ շատից դուրս ծառայողներ են համարվում, հետևաբար ոչ մի օրինաւոր, լեզուագէտ, կրթված անձն յանձն չի առնի ստանձնել մի պաշտօն, որ ոչ նիւթապէս է վարձատրվում, ոչ բարոյապէս։

Ենթադրենք մի վայրկեան, որ պետութիւնը արդարադատութեան մեծ պրինցիպի անունով յօժարի իր բիւդժէտը ծանրացնել և մի որոշ գումար բաց թողնել լաւ թարգմաններ վարձելու համար. բայց այդ միջոցը դեռ բաւական չէ արդարադատութեան գործը ապահովելու համար։

Եւ ահա ինչու։

Ճիշդ է այն կարծիքը, որ առհասարակ ընդհանուր դատաստանական հաստատութիւնների մէջ թարգմանները մի առանձին վընաս չեն կարող հասցնել։ Այն պատճառով, որ առաջին՝ այդ հաստատութիւնները միջոցներ ունեն քիչ կամ շատ կրթված, հմուտ և բարեխիղճ թարգմաններ վարձել. երկրորդ՝ այդտեղ թարգմանները միշտ ենթարկվում են կօնտրօլի փաստաբանների կողմից, որոնք, շատ քիչ բացառութեամբ, ծանօթ լինելով տեղական լեզուներին, միշտ կարող են յայտնել դատարանին թարգմանութեան անճշդութիւնները։

Դժբաղդաբար, այն դատաստանական հաստատութիւնը, որ ամենից շատ շփվում է ժողովրդի հետ, ամենից շատ անմիջական յարաբերութիւն ունի նրա հետ, ուրեմն և կոչված է ամենից շատ տարածել արդարադատութեան գաղափարը ժողովրդի մէջ, այն է հաշտարար դատաւորների և նրանց օգնական քննիչների ինստիտուտը, զրկված է այդ բոլոր միջոցներից։

Մեր երկրի ոչ միայն խուլ անկիւնների, այլ և շատ գաւառական քաղաքների հաշտարար դատարաններում փաստաբաններ չը կան, ուստի և այդպիսի տեղերում որ և է կօնտրոլ անհնարին է լինում, ուրեմն հաշտարար դատաւորը կամ նրա օգնական քննիչը ըստ ամենայնի կախում ունեն իրանց թարգմանից և նրա բարեխղճութիւնից։ Շատ անգամ թարգմանի դերը այնքան մեծ է լինում, որ de facto թարգմանն է հանդիսանում դատաւոր և ոչ թէ նա, որը de jure կրում է այդ անունը։

Յայտնի է, որ օրէնքի հիման վրա հաշտարար դատաւորները պէտք է ղեկավարվեն գլխաւորապէս իրանց խղճմտանքով, այն ներքին համոզմունքով, որ նրանք կը ստանան դատաւորների անմիջական խօսակցութիւնից և ցուցմունքներից։

Եւ ահա մի այդպիսի ամենակարևոր և պատասխանատու խնդրում հաշտարար դատաւորը և քննիչը կայացնում են ներքին համոզմունք գործի մասին ոչ թէ անմիջապէս, այլ միջնորդի ձեռքով, և իրանց խղճմտանքի ձայնը արձագանք է ոչ թէ անմիջական տպաւորութեան, այլ շատ անգամ կողմնակի ազդեցութեան։ Եթէ ենթադրենք մինչև անգամ, որ թարգմանները բարեխիղճ մարդիկ են, բայց դարձեալ մի այնպիսի հանգամանքում, երբ դատաւորը պարտաւոր է որոշում կայացնել սեփական խղճմտանքի և ներքին համոզմունքի հիման վրա, շատ դժուար է հիմնվել օտարի, կողմնակի անձի օգնութեան վրա, մանաւանդ երբ որ և է միջոց չը կայ այդ անձին կօնտրոլի տակ զցել, ուստի անհրաժեշտ է, որ դատաւորը ինքը կարողանայ կատարել թարգմանի դերը։

Վերև նկարագրած հանգամանքի մէջ պէտք է որոնել այն ցաւալի դրութեան պատճառը, որի մէջ ընկել են կովկասում գործող դատարանները, երբ դատարանական քննութեան ժամանակ, վէճերը կամ մեղադրվողները յանկարծ յայտնում են, որ իրանք ամենևին այս կամ այն տեսակ ցուցմունք չեն տուել քննիչին կամ հաշտարար դատաւորին, երբ նրանք առաջվայ ցուցմունքին բոլորովին հակառակ ցուցմունք են տալիս և այդպիսով խաբում, խանգարում արդարադատութեան գործը։

Տարակոյս չը կայ, որ այդպիսի կարգերը չեն կարող ներշնչել ամբողջին հաւատ և վստահութիւն դէպի դատարանները և օր առաջ պէտք է ջանալ վերացնել մեր երկրի դատարանական պրակտիկայից այդ չարիքը։

Անկասկած, դատաստանական վերաքննութեան յանձնաժողովը լուրջ ուշադրութիւն կը դարձնի այդ կարևոր հարցի վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Էջմիածին, նոյեմբերի 11-ին

«Մշակի» 128-րդ համարում, Ա. Տ. ստորագրութեամբ, Ամերիկայի Ուսիսը քաղաքէն գրուած մի նամակ կարդացի, յորում նամակագիրը՝ անշուշտ անտեղեակ այն օրինական պայմանաց, որով վարդապետ մը կարէ եպիսկոպոսանալ՝ կենթադրէ թէ եպիսկոպոսանալու մտադրութեամբ դիմել եմ Էջմիածին և Թերևս յաջողիմ, կը փութայ մի այդպիսի բարձր աստիճանի իմ անարժան լինելը ցոյց տալու համար թուել ամբաստանութեան հինգ կէտեր և յայտարարել, թէ իմ այդօրինակ անարժան վարմանց համար արդէն ժամանակին բողոքված է։ Սակայն մութի մէջ կը թողու և զանց կընէ յիշել այն կարևոր պարագայն, թէ ո՞րոց կողմանէ, ե՞րբ և ո՞ր տեղի ազգային կամ հոգևոր իշխանութեան գրուել են այդ գանգատները. այս կէտը հարկ էր պարզել, ըստ որում այդպիսի բողոքոյ լուր չէ հաղորդված ինձ որ և է ազգային պաշտօնական մի մարմնոյ կողմանէ. ոչ իմ պաշտօնավարութեան ատեն և ոչ յետոյ։

Այլ ընդհանուրակը, թէ Էջմիածնի հոգևոր գերագոյն իշխանութիւնը և թէ Կ. Պոլսոյ ազգային կենտրոնական վարչութիւնը, գնահատելով իմ հովուական պաշտօնավարութիւն Ամերիկայում, վարձատրած և քաջալերած են զիս. և նոյն իսկ իմ հրաժարականը այդ հովուական պաշտօնէն՝ ընդունեց Պոլսոյ ազգային կենտրոնական վարչութիւնը, ազատելով իմ կրկնակի թախանձանաց. նոյնը կը հաստատեն նաև արձանագրութիւնք Ուսիսրի ս. Փրկիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան, որ Ուսիսրի լուսաւորչական հայ ժողովրդեան քուէովը ընտրեալ և Ամերիկայի հովուական գործոց մասին միակ պատասխանատու մարմինն է առաջի ազգային կենտրոնական իշխանութեան։

Վերոյիշեալ հարևանցի ակնարկը իր նամակին իբր յառաջաբան դնելէ զկնի, պարոնը կանցնի թուել ամբաստանութեան հինգ կէտեր, որոնց

Մեծ գումար էր խոստացված նրան, ով Մելքոնի,—Սասունի քաջ ու սարսափ գցող «աւազակի» տեղը կարող լինէր մատնել։

Ինչ դրութեան մէջ գտաւ Պետոն իր հայրենիքը։

Մի մեծ յուսահատութիւն կարծես ճնշեց նրա սիրտը. երկնքից չպրտված էր մինչև դիտին։ Էլ չը կար իր խաղաղ կեանքը, իր նշանածը, և ոչ քաղցր բոպէներ, վարդագոյն երազներ...

Այնտեղ իր առջևն էր՝ միմիայն աւերակ, մոխիր ու սուգ։

Եթէ չէր գժվել, պատճառը այն էր, որ իրան կարողացել էին զոնէ ասել, թէ դէպի որ կողմն էր գնացել գիւղից փախածների խումբը, որոնց մէջ Վրթնօն և Նաղենիկը։

Խնուսի կողմը և այնտեղից դէպի սահմանագլուխ։ Եւ նա թողել էր ամեն ինչ, անցել էր դիակների վրայից, աւերակների կողքից, առել ուսին իր հրացանը և որդին կորցրած մօր կատաղութեամբ՝ սար ու ձոր էր ընկել իր նշանածին գտնելու։

Երբ երևակայում էր, որ իր քնքոյշ Նաղենիկը այժմ այդ ցրտին, ձների միջից, դուցէ ոտաբոբիկ և կիսամերկ քայլում անցնում էր, դուցէ անօթի կամ մուրալով խուսափում էր նա քիւրդերից, ըստիպված էր փչերի ու քարերի միջից փախչելու ճանապարհ որոնել... երբ երևակայում էր այդ, դառնութիւնը նրան խեղդում էր, մաշում ու կրծում նրա սիրտը...

Որքան կուզենար նա իր սիրածի կողքին լինել այժմ, բռնել նրա ձեռքից, իր կեանքը տալ՝ իր Նաղենիկին քաղցած չը թողնելու, ճանճերի պէս գետին փռել այն լիրբ քիւրդերին, որոնք նոյն իսկ աչքերով կը համարձակվէին նայելու իր սիրած աղջկայ վրա...

Գնաց Խնուս։

Նրան ասել էին, որ Կովանդուկի վրայով էր անցնելու գաղթականութիւնը։ Բայց ո՞ր ճանապարհով. արդեօք տեղ էին հասել անվտանգ. անօթութիւնը կամ քիւրդերը նրանց չէին ջարդել։

Նաղենիկը կարողացել էր դիմանալ ցրտի, յոգնածութեան, կարողացել էր քիւրդերից ազատ մնալ—այդ բոլորը նա չը գիտէր։ Ցանկվում էր, հազարաւոր ենթադրութիւններ անում, վատ վատ պատկերներ կազմում մտքումը։ Երբեմն պատկերացնում էր իր նշանածին քարշ գալիս՝ քարոտ ճանապարհով ձիւնի և ցեխի մէջ, կօշիկները պատռած, ոտքերը արիւնոտ, ձեռքերն ու երեսը ցրտից սևացած, շորերը ղզղզած, անօթի...

Երբեմն տեսնում էր նրան ուշաթափ՝ ընկած լիրբ Իւսուֆ աղայի հարեմում, և քիւրդ աղան, որ քանդում է նրա շորերը, իր պիղծ ձեռքերով շօշափում նրան...

Նա սոսկում էր, արիւնը գլխին խփում. քիչ էր մնում գժվէր, քիչ էր մնում գլորէր իրան ժայռից ցած, և վերջ տար իր կեանքին...

Խնուս հասած նա հարցրել էր ամենքին։ Ոչ ոք չէր կարողացել ասել յատկապէս, թէ եղել են խմբի մէջ Վրթնօն, Նաղենիկը։ Տեսել էին, որ Մշից շատ թշուառներ էին հասել անօթի, ծարաւ, ցրտից գրեթէ սառած, միացել էին Կովանդուկից, Կարա-չօբանից և Խնուսի այլ գիւղերից դուրս եկած զանազան գաղթողների հետ և ծածուկ ճանապարհներով գնացել էին դէպի սահմանգլուխ։

Նրա մէջ մի քիչ յոյս էր ծագել։

Շուտով նրան ասել էին, որ գաղթականները այլ ևս այնքան ստուար խմբեր չէին կազմում, որ նրանք ցերեկով թաքնվում էին և գիշերները անցնում էին գիւղերի կողքերից։

Ասել էին, որ քիւրդերը հոտ էին առել և խմբեր էին կազմում գաղթականների վրա յարձակում գործելու համար, որ «կըրք-սէրդէրինկ-ը» *) և համիդիէ զօրքի խմբերն իսկ լաւ որս համարելով ընկնող թշուառներին, ասպատակ էին սփռել ամեն կողմ։

Այժմ այլ ևս ոչ ոք Պետոին չը կարողացաւ ճիշդ տեղեկութիւններ տալ։ Միշտ անորոշ էին պատասխանները։ Շատերը վախենում էին և ուղղակի «չը գիտենք», «չենք տեսել» ասելով խուսափում էին։ Ոմանք ասում էին, որ մեծ խմբերը բաժանվել են աւելի մանրերի՝ և ցրվել սահմանագծի երկարութեամբ, որպէս զի կարողանային աննկատելի մնալ սահմանապահ զօրքերից։ Ուրիշները կարծում էին, որ խնուսցիք մշեցիներից բաժանվել՝ ուրիշ ուղղութեամբ էին գնացել, իսկ մի գիւղացի երիտասարդ կանչել էր Պետոին մի ախուռի մութ անկիւնում և այնտեղ յայտնել էր, որ մշեցիք մտել էին Քէօսէ-դաղ լեռների կիրճերը և յոյս ունէին այն կողմերից անցնել սահմանը։

Կանգ առնելը նրան անհանգստացնում էր աւելի. նա կարծում էր, որ իր Նաղենիկը կանչում էր իրան, պէտք ունի, որ նրա միակ պարտքն է գնալ հասնել նրան օգնութեան։ Ամեն անգամ կրակ տեսնելիս կարծում էր թէ հասել է։ Ամենքին հարցնում էր։

Որքան դժուար ճանապարհներ, որքան խոր խոր ձորեր կային։ Նա կտրեց անցաւ բոլորը, մագլցեց ժայռոտ լեռներ, անցաւ բլուրներ ու դաշտեր և ահա այժմ, մի ամբողջ ցերեկ քայլելուց յետոյ, չը նայելով որ յոգնած էր և անօթի, չնչասպառ մի վերջին ճիգ էլ գործեց և հասաւ Քէօսէ-դաղի վրա մի մեծ բլուրի, որտեղից ճանապարհը ոլորապտոյտ տանում էր դէպի մի ինչ որ հարթավայր և նրա անծանօթ գիւղերը։

Այդտեղ էր, որ կանգ առաւ նա։

*) Ճանապարհի ապահովութեանը հսկող զինուորներ։

Ի՞նչ գիւղեր էին ցածում. հայկական, թէ քիւրդական։ Ո՞ւր է հասել ինքը. ռուսաց հողի վրա էր, թէ դեռ Թիւրքաց հողն էր կոխում։

Ամեն ինչ անորոշ էր։ Կուրացած ցաւից, միայն մի նպատակ մտքում՝ նա քայլել էր. չէր էլ ուզել շատ տեղեկութիւն հարցնել. յոյս ունէր գտնել փնտռածին հոտառութեամբ, բնազդմամբ։

Սաստիկ ցուրտ էր. թէ յոգնած էր և թէ վըհատված։ Չը գիտէր ո՞ւր գնալ. կարելի էր մտածել, որ այդ կրակները գաղթականներն են վառել։ Գաղթականները դուցէ այժմ կամ ճանապարհ էին գնում և կամ գտած մի գիւղացու ախոռ, միմանց վրա էին ընկել ցրտից սառած, կապտացած, կիսամեռ և յուսահատ։

Մի քանի բոպէ նա մնաց այդպիսի դրութեան մէջ։ Ցածում կրակները հեռագնտ մարում էին, միայն մի տեղ, մի մեծ խարոյկ մնում էր երերուն և բոցավառ։

Վճռեց իջնել դէպի կրակը. պէտք էր տեսնել ովքեր կային այդտեղ և տեղեկութիւն հարցնել։ Հայեր լինէին—աւելի լաւ. եթէ քիւրդեր լինէին, նա իրան քիւրդ կը ձևացնէր և դուցէ աւելի ճիշդ տեղեկութիւններ ունենար գաղթող խմբերի մասին։

Հրացանը թևի վրա դրեց, ստուգեց որ փամփուշտը մէջն է, ուղղեց մէջքի սուրը և սկսեց իջնել։

Բլուրը հողային էր. ձիւնի շերտը փշրվում էր և Պետոյի ոտը երբեմն փլեցնելով խճային մի հոսանք, մի քանի բոպէի շառաչիւնով խզում էր գիշերային լռութիւնը։

Երբեմն աւելի պարզ էին լսվում շների ձայները։ Խարոյկը բլրի ստորոտումն էր։

Նա սկսեց արագացնել քայլերը և լսողութիւնը սրել...

(Կը շարունակվի)

հարկ կը համարիմ քանի մը տողով պատասխանել։—Ինչպէս յայտնի է, նամակագրի յիշած հինգ կէտերէն առաջին երեք տեղոյն ս. Փրկիչ եկեղեցւոյ ներքեւը գտնուած ազգային ժողովասրահի գործածութեան վերաբերեալ խնդիրներ են. և կարեւոր է գիտնալ թէ այդ չէնքի թէ նիւթական և թէ բարոյական կառավարութեան հոգը կը պատկանի ուղղակի եկեղեցւոյն հոգաբարձութեան և ոչ վարդապետին։ Եւ այն պարոնը՝ որուն համար նամակագիրը կըսէ թէ ներկայացման համար տասը գօլար սրահի վարձք պահանջած է, հոգաբարձութեան անդամ և նորա կողմանէ եկեղեցական կարգուած պաշտօնեայն լինելու է անշուշտ և ոչ թէ անպաշտօն ոք կամ վարդապետի մարդը, և այդ պաշտօնեայն իրաւունք ունի հոգաբարձութեան արժան դատած չափովը վարձք ստանալ սրահը գործածողներէն. հետեւաբար պարոնը իրաւունք չունի տրտունջ ընել պահանջված վարձքի մասին։ Գալով բողոքականաց ժողովասրահը մտնելու կամ ճառախօսելու արգելման կամ նոցա ժողովներէ դուրս արտաքսված լինելու խնդրոյն, երբէք այդպիսի մի որոշում կամ դէպք տեղի ունեցած չէ. այլ ամեն ազգային գումարմանց թոյլատրված է անխտիր թէ լուսաւորչականաց և թէ բողոքականց ներկայ գտնուիլ և խօսել, անշուշտ բացի այն գումարումներէն, որք տեղի ունեցած են լուսաւորչականաց յատուկ խնդրոյ մը համար. ինչպէս նոյնը ըրած են բողոքական ազգայինք՝ իրենց յատուկ գումարմանց ժամանակ։ Եւ եթէ հակառակը կը պնդէ պարոնը՝ պէտք է ցոյց տայ, թէ ե՞րբ և որ խնդրոյ համար եղած գումարման պատուն արգելք կամ արտաքսում տեղի ունեցած է։

Զորրորդ յօդուածով՝ պարոնը ուզած է ցոյց տալ զիս՝ մասնակից մի ազգաւնաս ժողովի, որ իբր թէ գումարված լինի ի Պօսթըն. դէպք մը որ իսպառ ինձ անծանօթ է, ոչ միայն իբ յիշած ժողովը և նորա որոշումը, այլ և պատճառը։ Հինգերորդով՝ որչափ կարող եղայ ըմբռնել, ուզած է ներկայացնել զիս իբր մի անժողովրդական մարդ. բայց կերևի թէ Ուսթերի ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովուրդը բոլորովին տարբեր գաղափար ունեցած է իմ նկատմամբ, որ ոչ միայն իմ պաշտօնավարութեան ժամանակ ցոյց տուած է իր համակրանքը և միշտ անհամաձայն գտնված է հրաժարելու մտադրութեանս, այլ և հովուական պաշտօնէ դադարելէս ամիսներ յետոյ, լսելով Ամերիկայէն մեկնելու դիտաւորութիւնս, թախանձանօք հրաւիրեց զիս Նիւ Եօրքէն յուսթը, պատարագել և քարոզել վերջին անգամ մալ. և առաւել քան զարժանն մեծարելէ զկնի, գումար մը ալ նուիրեց յօժանդակութիւն ճանապարհածախուցս։ Ժողովրդեան այս բարի տրամադրութիւն կը համաձայնի արդեօք պարոնի սասծին, ընթերցողաց կը թողում դատել։

Ի պատասխանի պարոնի նամակին՝ կը խնդրեմ խմբագրութեանդ, որ հաճիք ներկայ բացատրութիւնս հրատարակել «Մշակի» մէջ։

Յովսէփ վարդապետ Սարաճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Սուլթանը, որ ցարդ անձամբ և անմիջապէս կը խառնուէր հայոց խնդիրներուն և պետութիւնների տրվելիք պատասխանները խմբագրել կուտար՝ նախարարներու ժողովին կը յանձնէ բոլոր կնճիռները պարզել, ինքն անձամբ հրաժարուելով մասնակցել այդ խորհրդակցութիւններուն։ Ժողովը քանի մը անգամ կը գումարուի և ինքն ալ իր կողմէն գործը կը յանձնէ Տատեան Արմին փաշային, արտաքին գործոց նախարարի խորհրդականին, վստահելով անոր դիւանագիտական տաղանդին»։

—

Կ. Պոլսից, նոյեմբերի 24-ից, մեր թղթակիցը գրում է. «Վաղը, ուրբաթ, պատրիարքարանի մէջ եկեղեցական համագումար ժողով պիտի գումարուի պատրաստելու համար պատրիարքական ընտրելի եկեղեցականներու ցանկը, որ պիտի մատուցուի ազգային ժողովին։ Երեսփոխաններուն խրկուելիք հրաւէրներն արդէն պատրաստուած են»։

—

Երէկ, ամսոյս 2-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսում գիշերային ապաստարանի բացումը։ Ապաստարանը բացվում է 50 տղամարդկանց և 20 կանանց համար, Թիֆլիսի պօլիցիմէյստէր Մաստիցկու ձեռքով հանգանակած մասնաւոր նուէրներով։ Նրա նպատակն է աղքատներին տալ տաք, առողջարար բնակարան գիշերելու համար. փոքր ի շատէ միջոց ունեցողները կարող են նոյնպէս գիշերել, վճարելով մի կոպէկ մի գիշերվայ համար։ Բացման հանդիսին ներկայ էին քաղաքագլուխը, մամուլի ներկայացուցիչները և այլ անձինք։

—

Մեզ հեռագրում են Գանձակից. «Ամսոյս 4-ին, կիրակի օր, լինելու է Կարա-Մուրզայի խմբի երկրորդ կոնցերտը»։

—

Մեր լրագրի անցեալ համարում մի սխալ է մտել. «Մատենագրութիւն» վերնագրով յօդուածի տակ չէ դրվել հեղինակի՝ Ստ. Մալխասեանի անունը։

—

Թաւրիզից մեզ գրում են. «Սովեալների օգտին այստեղ հաւաքած փողերը բաւական լաւ տոկոս են բերում։ Երեի Հայուհեաց ընկերութիւնը որոշել է այդ 400 թումանը շահեցնելով՝ հաղարներ դարձնել, որ ապագայում սով եղած ժամանակ ժողովրդին փրկէ։ Երեելի լոգիկա»։

—

ՇԱՄԱԽՈՒ գաւառի Մաղրասայ գիւղից մեզ գրում են. «Մեր նորաշէն ուսումնարանը դեռ չէ աւարտվել. յոյս ունենք, որ մի ամսից յետոյ պատրաստ կը լինի։ Այժմ ուսումնարանի համար վարձված է մի ուրիշ տեղ, ուր շարունակվում է դասաւանութիւնը և գուցէ մինչև ուսումնական տարվայ վերջը այդտեղ էլ շարունակվի»։

—

ԴՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ պըտղեղէնը խիստ աջող կերպով ծախվեց Աստրախանում, արկղը 7 ր.—7 ր. 50 կ., որը չը տեսնված բան է. իսկ ինչ վերաբերում է ցորենի արժէքին, հարկաւոր է նկատել, որ ներկայումս մեծ քանակութեամբ ցորեն կայ Դուբայում և գաւառում, սակայն գինը շատ ցածր է. օրինակ, լաւ ցորենի պուդը ծախվում 40—45 կ., բայց էլի առնող չը կայ»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ խնդրում են մեզ տպել հետեւեալ, թէև արդէն ուշացած, նկատողութիւնը. «Մշակի» № 119-ի մէջ, Նախիջևանի գաւառի Կարճևան գիւղը կողոպտելու մասին տպած թղթակցութեան մէջ մի սխալ տեղեկութիւն կայ։ Թղթակցի այն խօսքերը, որոնք վերաբերում են գիւղի կանանց և աղջիկներին, բոլորովին անհիմն են և մենք պարտք ենք համարում հրապարակով ուղղել այդ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕԳԻՍՏ ԲԻՒՐԴՕ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի նախագահ Օգիւստ-Լօրան Բիւրդո, ինչպէս հեռագրում է մեզ Հիւսիսային գործակալութիւնը, վախճանվեց Պարիզում նոյեմբերի 30-ին։

Օգիւստ Բիւրդո, ֆրանսիացի քաղաքական գործիչը և գրողը ծնվել է 1851 թուին Լիոնում։ Աղքատ ծնողների զաւակ լինելով, նա դժուարութեամբ հարթեց իր կեանքի ճանապարհը, մտնելով նորմալ դպրոցը Պարիզում. 1870 թուին նա, որպէս կամաւոր զինուոր, մտաւ զինուորական ծառայութիւն և մասնակցելով ֆրանս-պրուսական պատերազմին, վիրաւորվեց և գերի վերցվեց։

Պատերազմից յետոյ Բիւրդո փիլիսոփայութեան պրոֆէսոր դարձաւ Ս. Էտիէնում, ապա Պարիզի Լիւդովիկ Մեծի լիցէում, իսկ 1881 թուին բարձր պաշտօն ստացաւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, երբ այդ մինիստրութեան գլուխ էր կանգնած Պոլ-Բէր։ 1885 թուին պատգամաւոր ընտրվելով Լիոնի կողմից, Բիւրդո միացաւ արմատական կուսակցութեանը և մասնաւոր եռանդուն մասնակցութիւն ունէր կրթութեան վերաբերեալ հարցերին։

Բիւրդո թարգմանել է Ֆրանսերէն լեզուով Հերբերտ Սպենսէրի և Շոպենհաուէրի գրուածքները։ Նա գրել է նոյնպէս «L'instruction morale a l'école» (1883)։ Բիւրդո 1890 թուին Ֆրանսիայի ներկայացուցիչներից մէկն էր բանւորական հարցին վերաբերեալ Բերլինում տեղի ունեցած կոնֆէրէնցիայում։ Ապա Կարնօի մահից յետոյ, երբ Կազիմիր Պէրիէ հանրապետութեան նախագահ դարձաւ, Բիւրդո պատգամաւորների ժողովի նախագահ ընտրվեց։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՐԷՅԽՍՏԱԳԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Հեռագիրը արդէն հաղորդեց գերմանական ռէյխստագի բացման և Վիլհէլմ կայսրի գահական ճառի մասին։

Գերմանական կայսրի գահական ճառի ուշադրութեան արժանի կէտը այն է, որ նրա կարծիքով խաղաղութեան գործը այժմ աւելի ամուր հիմքերի վրա է դրված, չը նայելով որ դրա հետ միաժամանակ լուրեր են պտտում, որ կառավարութիւնը նոր պահանջներ է անում պարլամենտից զօրքը աւելացնելու և առհասարակ զինուորական գործի համար։

Գահական ճառի ուշադրութեան արժանի երկրորդ կէտը այն օրինագիծն է, որ կառավարութիւնը կազմել է հակայեղափոխական տարրերի դէմ միջոցներ ձեռք առնելու համար։ Գահական ճառի մէջ ասված է, որ կառավարութիւնը, ցանկանալով նպաստել ազգաբնակութեան ստորին դասակարգերի տնտեսական և բարոյական զարգացման, անհրաժեշտ է համարում դիմադրել այն անձանց կործանարար գործունէութեանը, որոնք աշխատում են դժուարացնել պետական իշխանութեան գործը՝ կատարելու իր պարտականութիւնները։

Եթէ ռէյխստագը կը մերժի այդ օրինագիծը, անկասկած ռէյխստագը կարձակվի։ Ամբողջ գերմանական մամուլը միաբերան այդ մտքն է յայտնում։ Հետևաբար ռէյխստագում այդ հարցի առիթով տեղի ունենալի վիճաբանութիւնները մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնեն։

Ուշադրութեան արժանի մի հանգամանք ևս տեղի ունեցաւ ռէյխստագի բացման ժամանակ։ Երբ ռէյխստագի նախագահը, վերջացնելով իր ճառը, «hoch» աղաղակեց ի պատիւ կայսրի, բոլոր պատգամաւորները, բացի ճախակողմեաններից, տեղերից վերկացան։ Այդ բանը զայրոյթ պատճառեց ժողովին, և նախագահը դիմելով ժողովին ասեց հետեւեալը։ «Մի այդպիսի վարմունք չէ համապատասխանում ոչ իսկական գերմանացիների բարքերին, ոչ էլ պարլամենտի սովորութիւններին և վիրաւորում է պարլամենտի անդամների զգացմունքները։ Յաւում եմ, որ միջոցներ չունեմ պատշաճաւոր կերպով պատժելու մի քանի պատգամաւորների այդպիսի վարմունքը։»

Պատգամաւոր Զինգէր սոցիալիստների կողմից յայտարարում է, որ սոցիալիստները չեն կարող «hoch» կոչել, ի նկատի ունենալով այն, որ զինուորներից պահանջում են, որպէս զի նրանք հրացանաձգարկ անեն իրանց եղբայրներին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻՑ

—

Կ. Պոլիս, նոյեմբերի 15-ին

Կ. Պոլսի անգլիական դեսպանը մինչև այժմ էլ կը պահանջէ 61-րդ յօդուածի անպայման գործադրութիւնը։ Այստեղ այն կարծիք կայ, որ եթէ Անգլիան և Ռուսիան միացած գործեն, հաւանականաբար Թիւրք կառավարութիւնը տեղի պիտի տայ և 61-րդ յօդուածը այսքան տարի ձգձգելուց յետոյ վերջապէս պիտի գործադրել հարկադրուի։

Թիւրք կառավարութիւնը Բերլինի դաշնագիրը ստորագրող վեց պետութիւններուն պաշտօնական զեկուցումներ ուղարկեց, որով կը հերքէ Սասնոյ կոտորածի լուրը և այդ մասին եւրօպական լրագրութեան հրատարակութիւնները։ Պաշտօնական զեկուցում մըն ալ տպեցին Թիւրք թերթերը, որը հրատարակեցին բոլոր տեղական թերթերը։

Այս զեկուցումով Թիւրք կառավարութիւնը փոխանակ հերքելու, ընդհակառակը աւելի կը հաստատէ։ Այդ պաշտօնագրով կը ծանուցանէ, որ այդպիսի կոտորած տեղի չէ ունեցեր, այլ չորրորդ զօրաբանակի հրամանատարը զօրքով գացած է եղեր Սասուն պատժելու համար այն հայ աւազակները, որոնք երկրի խաղաղութիւնը, անդորրութիւնը խռոված էին վերջերս իրենց ասպատակութիւններով, թալաններով և կեղեքումներով, և թէ Սասուն բնակող կայսերական հպատակները առաջուան պէս կատարեալ խաղաղութեան և հանդարտութեան մէջ են և իրենց գործերով կը զբաղին։ Հանդարտութիւնը վերահաստատուած ըլլալով զօրքերն ալ ետ դրկուեր են իրենց տեղերը։

Իր պաշտօնական զեկուցումը Թիւրք կառավարութիւնը հաստատելու, եղած հրատարակութիւնները հերքելու իբր զօրաւոր և անհերքելի ապացոյց կը յիշէ Բիթլիսի կուսակալի և Դ. զօրաբանակի հրամանատարի ծանուցումներն և հեռագիրները։ Ցիծաղելի չէ կոտորածի հեղինակների ծանուցագրերով և հեռագիրներով հերքել Սասնոյ կոտորածը։

Ի միջի այլոց Թիւրք թերթերը հրատարակեցին և այն կայսերական մասնախմբի չորս Թիւրք անդամներու անունները, որոնք պիտի երթան և քննեն հայ աւազակներու ասպատակութեանց խնդիրը։ Պաշտօնագիրը կը վերջանայ հետեւեալ տողերով. «Կառավարութիւնը իր արդարութեան և զթութեան հովանիին տակ հաւասարաբար պաշտպանած հպատակներու նկատմամբ բնաւ երբէք պատշաճ չի կրնար գտնել վերոյիշեալ լրագիրներուն հրատարակածին նման դէպքեր. և ճշմարտութիւնը այսպէս յայտնելով, կը հերքէ այդ հրատարակութիւնները»։

Այստեղ այն համոզում կը տիրէ, որ այդ մասնախումբ մի ձևականութիւն է, և ոչինչ հետևանք չի ունենար, ինչպէս ունեցած չեն դոյն օրինակ մասնախմբեր։

Խ—րով

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագիրը ասում է, որ մի քանի ժամանակից բուլգարական և սերբիական լրագիրները շատ են խօսում «գործերի անտանելի դրութեան» մասին Մակեդոնիայում, թէպէտ դեռ նորերս թէ Սոֆիայի և թէ Բէլգրադի քաղաքագէտները շատ էին աշխատում հաճոյանալ Թիւրքիային։ Թիւրքաց կառավարութիւնը, հիասթափվելով բուլգարներից, պաշտպանում է այժմ սերբիական պրոպագանդան, բայց չէ ցանկանում քրիստոնեայ նահանգապետ տալ Մակեդոնիային։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

—

Ֆաճկական աղբիւրից, ուրեմն մի փոքր կասկածելի աղբիւրից տեղեկութիւն ունեմ, որ Ստամբուլում շուտով լրտեսների ցուցահանդէս պէտք է լինի։

Նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 2-ը ցուցահանդէսում մասնակցելու ցանկութիւն են յայտնել 33,333 լրտեսներ։

—

Հեռագիրը մի հետաքրքրական լուր բերեց. «Paris» լրագրի խմբագիրը՝ Կանիվէ նոյնպէս ձերբակալվեց չանտաժի համար։ Հետաքրքրական է այդ ոչ թէ այն պատճառով, որ մի մարդ էլ աւելացաւ Պարիզի չանտաժիստների թիւին, այլ այն, որ այդ նոյն Կանիվէ, մի երկու շաբաթ դրանից առաջ, երբ չանտաժի պատմութիւնը բացվեց, մի օրօրընդօստ յօդուած գրեց չանտաժի և չանտաժիստների դէմ։ Եւ ահա յօդուածը գրելուց մի քանի՞ օր յետոյ՝ ձերբակալվեց, որպէս մասնակից չանտաժի։

Կանիվէ.—ժամանակակից տիպ է։ Խօսել մի բանի դէմ, բայց գործով մասնակից լինել.—ահա այն ողորմելի տիպերը, որ վխտում են ոչ թէ միայն հայերի մէջ, այլ նոյն իսկ Պարիզում, Ֆրանսիայի լուսաւոր մայրաքաղաքում...

—

Բայց չանտաժիստները միայն Պարիզում չեն, այլ և Թիֆլիսում։ Մեր աստուածավախ քաղաքում բուն են դրել մի խումբ մութ չանտաժիստներ, որոնց փեշակն է՝ անանիմ նամակներ գրել, չինծու հեռագիրներ ուղարկել, սարսափելի լուրեր տարածել, հրէշաւոր փոսեր փորել...

Բայց, Աստուած ողորմած է,—դա էլ մի օր կը բացվի։ Պարիզինը խօմ բացվեց, Թիֆլիսն էլ կը բացվի...

—

Ճիշդ է ասված՝ արգելված պտուղը քաղցր կը լինի։—Ոչ մի տարի «Մշակը» այնքան բաժանորդ չէ ունեցել Էջմիածին—Վաղարշապատ, որքան այս տարի։

Եւ այդ էլ անկասկած այն պատճառով, որ այդ «առաքելական վայրերում» «Մշակը» նոյնքան հալածվում է, որքան այժմ Զինաստանում այն ամենը, ինչ որ եապոնական է...

Այո, արգելված պտուղը քաղցր կը լինի։

ԳՐՈՂ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 Նոյեմբերի։ Առևտրի դէպարտամենտը հերքում է լրագրական այն տեղեկութիւնները, թէ ֆինանսների մինիստրութիւնը առաջադրութիւն է արել պետական խորհրդին՝ արդիւնաբերական ձեռնարկութիւնների տէրերի պատասխանատուութեան մասին բանուորների մարմնական վնասների և մահվան համար։

Մոսկվայի ֆիլարմոնիական ընկերութեան պատգամաւորութիւնը, բաղկացած Շոստակովսկի, Լուկիտին, Վոստրեակով դիրեկտորներից և Իվանով ու Կլէյստ աշակերտներից, մի չքեղ արծաթէ պրոսակ դրին ընկերութեան դպրոցի աշակերտների կողմից հանգուցեալ Թագաւորի գերեզմանի վրա։ Պատգամաւորութիւնը այսօր ընդունվեց ընկերութեան հովանաւոր Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէոդորովնա Մեծ Իշխանուհու կողմից։

ՎԻԵՆՆԱ, 30 Նոյեմբերի։ Պաշտօնապէս յայտարարված է, որ Պետերբուրգում դեսպան է նշանակվում Իշխան Լիխտէնշտէյն։ Լրագիրները շատ գոհ են, որ դեսպանական այդ նշանաւոր պաշտօնի վրա նշանակված է մի անձն, որ աչքի ընկնող յատկութիւններ ունի։

Վիէննայի և Բերլինի կաբինէտները շատ սառը վերաբերվեցին Թիւրքաց հայերի ճնշումներին վերաբերեալ դիպլոմատիական յայտարարութիւններին։

ՊԱՐԻԶ, 30 Նոյեմբերի։ Հայոց հարցը հերթական հարցերի ցուցակից հանված է։ Մինիստրութիւնները տատանվում են և չը գիտեն գործունէութեան ինչ ընթացք բռնել, և տրամադրված չեն չարունակելու միջոցներ ձեռնարկել, մինչև որ նախապէս նոր տեղեկութիւններ չեն ձեռք բերի։

Պատգամաւորների ժողովի նախագահ Բիւրդո վախճանվեց այսօր առաւօտ։ Պատգամաւորների ժողովի նիստերը, որպէս սուգի նշան, յետաձգված են մինչև երկուշաբթի։

Այսօր լրագրական շանտաժի գործի պատճառով էլի կալանաւորված է «Paris» լրագրի գլխաւոր խմբագիր Կանիվէ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի։ Ֆինանսների մինիստրութիւնը կրկին սկսել է ցորեն գնել իսանդանստվոյի համար։ Ցորենը կը գնվի զմտվոների գործակցութեամբ. գները կորոշվեն աչքի առաջ ունենալով և ցորենի յատկութիւնը։

Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլատրեց բոլոր բժշկական հիմնարկութիւններին, բժշկական ընկերութիւններին և դեղատներին բերել տալ արտասահմանից Բու և Բէրինգ բժիշկների հակադիֆտէրիտային դեղը. սակայն այդ դեղը կարելի է տալ միայն բժիշկների ըստ էպտով, դեղի պատրաստութեան ժամանակը նշանակելով։ Դեղը գործածել կարող են բացառապէս բժիշկները, իրանց անձնական հսկողութեամբ և պատասխանատուութեամբ։

ՇԱՆԳՀԱՅ, 1 դեկտեմբերի։ Եապոնական երկու զօրաբաժիններ, ընդամենը 25,000 հոգի, ափ իջան Շանգհայկպանի և Տակուի մօտ՝ Պեկինի վրա արշաւելու համար։

ԵՕԿՕՀԱՄԱ, 1 դեկտեմբերի։ Եապոնական 2-դ զօրաբաժնի մի մասը առանց դիմադրութեան գրաւեց Ֆուչու, որ գտնվում է Պօրտ Արտուրից դէպի հիւսիս։

ԲԵՐԼԻՆ, 1 դեկտեմբերի։ առանձին յանձնաժողովը մերժեց 9 ձայնով 4 ի դէմ սոցիալիստ Լիբկնէխտի դէմ դատ սկսելու առաջարկութիւնը։ Ստաղութիւն կար դատի ենթարկել Լիբկնէխտին՝ մեծութիւնը վիրաւորելու համար։ Լիբկնէխտին դատի ենթարկելու առաջարկութիւնը կը քննվի պարլամենտում յեղափոխական կուսակցութիւնների դէմ եղած օրինագիծը քննելուց յետոյ միայն, որը հերթական հարց է լինելու ծննդեան տօնից յետոյ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏՈՒԲԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, -թի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՑՈՒՆՎԱԲԻՑ ՏՊԱԳՐՎԵԼՈՒ Է

„ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ“

(մօտ 400 երես)

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

Հայկական դպրոցական բաժնով։

Բաժանորդագինը 50 կոպէկ. յետոյ կը բարձրանայ։ Դիմել կենտրոնական գրավաճառանոցին։ (№ 140 1—2

ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ը ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

պատմական վէպի ԵՐԿՐՈՐԴ հատորը։ Երկու հատորի գինը մէկ ռուբլի, իսկ դեկտեմբերի 20-ից յետոյ 1 ր. 50 կոպէկ։

Դիմել՝ կենտրոնական գրավաճառանոցին, կամ հեղինակին՝ Тифлисъ. Эчміадзинская улица, № 20. БАГРАТУ АЙВАЗЯНЦУ.

(№ 37) 2—2

ՆԿԱՐԻՉ ԵՆՈՎՔ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Բացել է իր նկարների ցուցահանդէս, կալուածական բանկի շինութեան մէջ։ Ցուցահանդէսը բաց է առաւօտեան 10—3 ժամը և երեկոյեան 5—10 ժամը։

ՄՈՒՏՔԸ 20 ԿՈՊԷԿ

Աշակերտների և երեխաների համար՝ 10 կ.

(№ 136) 3—3

Շուտով լոյս կը տեսնի

Մ ա ն ա ե գ ա ց ց ա յ ի

„ԲԱՂԴԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ“

Գինն է 80 կոպէկ.

Դիմել՝ Чрезъ Вагаршапатъ въ Сел. Гечрлу. старшему учителю Сарикяну. (№ 135) 3—5

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1) «ԷՎԷԼԻՆԱ», էջերդ, գինն, է . . 50 կոպ։
2) «ԱՑՍՏԵՂ ԵՒ ԱՅՆՏԵՂ», . . . 10 »
3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . . . . 25 »
4) Նոյնը գերմաներէն լեզուով . . 25 »
5) «DIE HUNGERSNOTH IN TURKISCHE ARMENIEN». . . . . 20 »

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Թիֆլիսի գրավաճառանոցներում։

(№ 127) 7—10

ՍԵՐՄԱՅԻՆ ԴԷՊՕ ՇՈՒԼՑ

ՑԱՋՈՐԴ Մ. Ի. ՖԷԳՈՐՕՎՍԿԻ

Ֆիրման գոյութիւն ունի 1832 թուից

Մ ո ս կ վ ա, Ս ա ղ օ վ յ ա, Կ ր ա ս ն ի ե-Վ օ ր օ տ ա, տ ա ւ ն Բ ա ռ ւ զ է ր ի.

Բանջարանոցային, ծաղկային և գիւղատնտեսական սերմերի լիակատար պատկերազարդ կատալոգը կը դուրս գայ 1894 թուի դեկտեմբերին։ Մեր յարգելի մշտական գնողներին կատալոգը ձրի է ուղարկվում։ Իսկ այն անձինք, որոնք առաջին անգամ ցանկանում են կատալոգն ստանալ, պէտք է բարեհաճեն ուղարկել չորս եօթը կոպէկանոց մարկաներ, որոնք 3 ռուբլուց ոչ պակաս պատւերի ժամանակ կը հաշվեն պատւերի գումարի մէջ։ Բոլոր սերմերը բերվում են արտասահմանից ամենալաւ արդիւնաբերողներից, և նրանց իսկութիւնը ստուգվում է խնամքով մեր Դէպօում։

(№ 126) (ամ. 2) 4—8

Ի. Ա. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, առուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԳ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։

Ուսուցանում է։

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՌՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ յինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։ (№ 16) (չ) 38—100

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Է Վ Է Լ Ի Ն Ա

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻԴ

ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ա. ԴԱՍՏԱԿԵԱՆԻ

Հրատարակութիւն „Արօր“ տպարանի

ԳԻՆԸ 70 ԿՕՊ.

Ծախվում է Թիֆլիսում, Տէր-Սարգսեանի խանութում, Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Խիդդեկէլի գրավաճառանոցում։ (№ 137) 4—6

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թուին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻՒԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . . .
„Театральныя“. . . . . 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել զործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—26



Ա. ԿՕՊՊԻ

ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹՈՒՄ

(Միքայէլեան փողոց, № 132)

կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 ռուբլուց մինչև 450 ռուբլի արժողութեամբ։

(№ 119) 15—25

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պատեօրի սիստեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՈՅԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։

Սերմը ստացված է ուղղակի յայտնի "Էկոնոմիտես„ ֆիրմայից։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻԶ, ԲԱԳՈՒ, ԵՂԸ. Մնացականեաններին, իսկ ՆՈՒԽԻ՝ Աղայ Մուսայ Մահմեդովին։

Այս հասցէով, Бр. Мнацаканянцъ, Батумъ կամ Тифлисъ կամ Баку։

(№ 136) (չ. ե.) 2—25

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ**, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նումէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նումէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ բէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 113—130 (չ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Декабря 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.